

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ

1.1.1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), առաջնորդվելով Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և Եվրամիության (այդ թվում՝ Եվրոստատի) փորձագետների կողմից տրված խորհրդատվությամբ, 2010թ. ողջ ընթացքում իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ և սկսած 2011թ. հունվարից դադարեցրել է ՀՆԱ ամսական ցուցանիշի հաշվարկը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն իսկ ԱՊՀ անդամ մի շարք երկրներ ևս (Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Մոլդովա) անցում են կատարել ՀՆԱ-ի ամփոփման և հրապարակման Եվրամիության փորձառությանը և հրաժարվել են ամսական (աճողական հենքով հավաքագրվող և հաշվառվող) ՀՆԱ-ի ամփոփման ԱՊՀ անդամ-երկրների համար ԱՊՀ հիմնադրման պահից սահմանված պրակտիկայից: Փոխարենը՝ որպես տնտեսությունը բնութագրող ամսական ամփոփ ցուցանիշ, Հայաստանում այսուհետ հաշվարկվելու և հրապարակվելու է *Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՅ)*՝ զուտ ամսվա կտրվածքով և ամսական պարբերականությամբ, իսկ ՀՆԱ-ի ցուցանիշը՝ միայն եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Նկարագրությունը

ՏԱՅ-ը երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ է: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալ տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունը նախորդ ամսվա և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ: Յուրաքանչյուր ամսվա համար այն իրենից ներկայացնում է ամբողջ տնտեսության համար մեկ ագրեգացված ցուցանիշ՝ ինդեքսի տեսքով:

Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՅ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՅ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

Տվյալների ընդգրկունությունը

ՏԱՅ-ն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր ոլորտները և ամփոփում է ՏԳՏՀ մեկ նիշի մակարդակով տնտեսական գործունեության բոլոր տեսակները:

Տվյալների հավաքագրման մեթոդները և աղբյուրները

SUS-ը հաշվարկվում է ՀՀ ԱՎԾ վիճակագրությունն վարող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հավաքագրվող և վարչական ռեգիստրներից ստացվող դիսկրետ (գուտ) ամսական տվյալների հիման վրա՝ կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գների նկատմամբ գների ինդեքսները: Տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալի հաշվարկված ինդեքսներն ագրեգացվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի գուտ հարկերի և ՖՄԱԶԾ) այդ գործունեության տեսակների ունեցած կշիռները:

Տվյալների հրապարակումը (տարածումը)

Յուրաքանչյուր ամիս հրապարակվելու է հաշվետու ամսվա SUS-ը՝ հաշվարկված նախորդ ամսվա նկատմամբ և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ: Հրապարակվելու են նաև SUS-ի ժամանակագրական շարքերը՝ շղթայակապ ինդեքսները: Օպերատիվ տվյալները կհրապարակվեն «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» մամուլի հաղորդագրությունում, իսկ առավել ամբողջականը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական տեղեկատվական զեկույցում:

Վերանայման քաղաքականությունը

SUS ամբողջական գնահատականները վերանայվում են համաձայն տարեկան ՀՆԱ-ի վերանայման ժամանակացույցի՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ: Վերանայման հիմքը տարեկան ՀՆԱ-ի ցուցանիշների կշիռների փոփոխությունն է:

Հաշվի առնելով, որ տարեկան ՀՆԱ-ի գնահատականները առկա են լինում տարվա ավարտից հետո 90-րդ օրը, ապա ընթացիկ տարվա առաջին երեք ամիսների համար SUS-ը հաշվարկվում է՝ հիմնվելով նախանցած տարվա (հաշվետու տվյալներով գնահատված տարվա) ՀՆԱ-ի կշիռների վրա (օրինակ՝ 2011թ. առաջին երեք ամիսների համար՝ 2009թ. ՀՆԱ-ի կշիռներով), որոնք կվերանայվեն նախորդ տարվա (օր. 2010թ.) ՀՆԱ-ի կշիռներով, երբ այդ գնահատականները հասանելի կլինեն (օրինակ՝ 2011թ. առաջին երեք ամիսների վերանայված SUS-ը կհրապարակվի 2011թ. ապրիլի 20-ին, իսկ առավել ամբողջականը՝ ապրիլի 29-ին):

SUS-ի հետընթաց հաշվարկը

Հաշվի առնելով վիճակագրական տվյալների սպառողների պահանջները՝ ունենալ երկար ժամանակագրական շարքեր վերլուծություններ և կանխատեսումներ իրականացնելու նպատակով, ՀՀ ԱՎԾ-ն նախատեսում է նաև հետագայում աստիճանաբար իրականացնել SUS-ի հետընթաց հաշվարկ՝ այնքան ժամանակաշրջանի համար, որքան որ դա հնարավոր է առկա տեղեկատվական և այլ ռեսուրսների պայմաններում (տվյալների աղբյուրներ, դասակարգումներ, աշխատանքի ծավալ և ծանրաբեռնվածություն):

2011թ. հունվարի տնտեսական ակտիվության ցուցանիշը (SUՑ)

Ամիսները	Նախորդ ամսվա նկատմամբ, %	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, % ¹	Շղթայակապ ինդեքսներ (2009=100) ²
2010			
Հունվար	44.7	X	60.0
Փետրվար	109.1	X	65.5
Մարտ	124.5	X	81.5
Ապրիլ	92.1	X	75.1
Մայիս	110.5	X	83.0
Հունիս	117.4	X	97.5
Հուլիս	106.8	X	104.1
Օգոստոս	119.9	X	124.8
Սեպտեմբեր	117.3	X	146.3
Հոկտեմբեր	86.9	X	127.1
Նոյեմբեր	94.4	X	120.1
Դեկտեմբեր	109.0	X	130.9
2011			
Հունվար	49.4	107.7	64.6

Աղյուսակից երևում է, որ 2011թ. հունվարին SUՑ-ը 2010թ. հունվարի նկատմամբ կազմել է 107.7%, իսկ նախորդ ամսվա (2010թ. դեկտեմբերի) նկատմամբ՝ 49.4%:

¹ X-ով վանդակներում սկզբնական շրջանում տվյալներ չեն լինելու: Դրանք կիրառարակվեն այն ժամանակ, երբ կավարտվեն 2009թ. ամսական տվյալների վերահաշվարկները:

² Շղթայակապ ինդեքսների ժամանակագրական շարքերը հնարավորություն են տալիս հարաբերել ինչպես ցանկացած ամսվա ցուցանիշները, այնպես էլ ստանալ մի քանի ամիս պարունակող ժամանակահատվածների հարաբերությունը բնութագրող ինդեքսներ: